ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ
«Արճիսի միջնակարգ դպրոց»ՊՈԱԿ-ի
Տնօրեն Հ.Մոսայան

ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ
«ԱՐՃԻՍԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ -Ի

2022-2023 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՏԱՐԵԿԱՆ ՊԼԱՆ

2022-2023 ուսումնական տարում դպրոցի կառուցվածքը

Դասարաններ, աշակերտներ (ըստ1.09. 2022թ.)

I դաս. - 14 աշ.
II դաս. - 13 աշ.
III դաս.- 16 աշ.
IV դաս. 16 աշ.
V դաս.- 16 աշ.
VIդաս.- 16աշ.
VII դաս.-19 աշ.
VIII դաս.-12 աշ.
IX դաս.- 8 աշ.
X դաս.- 2 աշ.
XI դաս.- 4 աշ.
XII դաս.- 10աշ.

Ընդամենը՝ 12-11 դասարան, 146 աշակերտ

Ուսուցիչներ

- Տնօրեն – 1(դասավանդող)
- Փոխտնօրեն - 1(դասավանդող)
- Օպերատոր-1
- Գործավար 1
- Գրադարանավար-1
- Ջինղեկ – 1 (դասավանդող)
- Դասղեկ - 11
- Ուսուցիչ – 21
- Մանկավարժի օգնական -2
- Առարկայական մասնախումբ - 6

Թիվ	Աշխատանքի բովանդակություն	Այլ տեղեկություններ	Ժամկետ	Պատասխանատու
1	Մանկավարժական խորհրդի նիստ	Մանկավարժական խորհուրդը որոշում է ընդունում դպրոցական բաղադրիչի ժամաքանակը որոշակի առարկայախմբին հատկացնելու մասին:	Օգոստոսի 20-25	Տնօրեն,տնօրենի ու/դ տեղակալ, ուսուցիչներ
2	Մեթոդմիավորումների նիստեր	Մեթոդմիավորումների կողմից տվյալ առարկայախմբի՝ որոշակի առարկաներին հատկացնելու հարցի քննարկում՝ ըստօրինակելի պլանի տրված ժամաքանակի:	Օգոստոսի 25-26	Տնօրեն,մ/մ նախագահներ
3	2022-2023 ուստարվա ուսպլանի հաստատում	Մանկավարժական խորհրդի որոշմամբ հաստատվում է տնօրենի կողմից:	Օգոստոսի 26-27	Տնօրեն
4	Դասագրքերի բաշխում	Դասագրքերը բաշխում են տնօրենի հրամանով՝ ՀՀ ուսումնական հաստատությունները դասագրքերով ապահովելու կարգի մասին:	Օգոստոսի 20-27	Տնօրեն,գրադարանավար, դասղեկներ
5	Նախորդ ուստարվա ուսումնադաստիարակչական աշխատանքների արդյունքների ամփոփում՝ հիմք ընդունելով ՈՒԴԱՊ-ը: Ներքին գնահատմանհաշվետվության քննարկում	Ուսումնադաստիարակչական աշխատանքների արդյունքներն ամփոփվում են մանկավարժական խորհրդի նիստում:	Օգոստոսի 25-26	Տնօրեն
6	Առաջիկա ուստարում ուսումնադաստիարակչական աշխատանքների կազմակերպման և վերահսկման ուղղությամբ լիազորությունների բաշխում	Բաշխումը կատարվում է ըստ «Հանրակրթության մասին»ՀՀ օրենքի,դպրոցի օրինակելի կանոնադրության և դպրոցի զարգացման ծրագրի:	Օգոստոսի 26	Տնօրեն,տնօրենի ու/դ տեղակալ
7	Մանկավարժական խորհրդի կազմի հաստատում, քարտուղարի ընտրություն	Մանկավարժական խորհրդի կազմը հաստատվում է տնօրենի հրամանով մեկ ուստարի ժամկետով, հաստատվում է նաև մանկխորհրդի ժամանակացույցը:	Օգոստոսի 30	Տնօրեն,ուսուցիչներ
8	Մեթոդմիավորման նախագահների և	Տօրենի հրամանով հաստատում և մանկխորհրդին է ներկայացնում մեթոդմիավորման	Օգոստոսի 30	Տնօրեն

	դասղեկների կազմի հաստատում	նախագահների և դասղեկների անվանական կազմը:		
9	1-ին կիսամյակի դասացուցակի նախնական տարբերակի կազմում	1-ին կիսամյակի դասացուցակի նախնական տարբերակը կազմվում և ներկայացվում է մինչև պարապմունքների սկիզբը:	Օգոստոսի 30	Տնօրենի ու/դ տեղակալ
10	Դպրոցի դասարանների կազմում	Դասարանները կազմվում են յուրաքանչյուր ուստարվա համար մանկխորհրդի որոշման հիման վրա,տնօրենի հրամանով:	Օգոստոսի 30-31	Տնօրեն,մանկ ավարժական խորհուրդ
11	Ուսումնադաստիարակչական ախատանքների տարեկան պլանի/ՈՒԴԱՊ/հաստատում	ՈՒԴԱՊ-ը մանկավարժական խորհրդի որոշմամբ հաստատում է տնօրենը:	Օգոստոսի 31	Տնօրեն
12	1-ին կիսամյակի դասացուցակի,կայուն ժամատախտակի հաստատում	Դասացուցակը հաստատվում է տնօրենի հրամանով:Տնօրենի կողմից հաստատվում է նաև տնօրենի տեղակալի ուսումնա դաստիարակչական աշխատանք ների տարեկան պլանը:	Սեպտեմբ երի 1-4	Տնօրեն
13	Առանձին ուսումնական առարկաների թեմատիկ պլանների կազմում և հաստատում տնօրենի կողմից:	Թեմատիկ պլանը կազմվում է առարկան դասավանդող ուսուցչի կողմից և մեթոդմիավորման հավանությամբ ներկայացվում տնօրենի հաստատմանը:	Սեպտեմբ երի 1-7	Տնօրեն,ուսու ցիչներ
13	Դասարանների և դպրոցի ծնողական խորհուրդների ձևավորում:Հաստատության ծնողական ժողովի անցկացում	Անց են կացվում դասարանական ծնողական ժողովներ,որոնց կազ մից ընտրված ծնողական խոր հուրդների կազմից ձևավորվում է հաստատության ծնողական խորհուրդը:Անց է կացվում դպրոցի ծնողական ժողով տնօրենի մասնակցությամբ:	Սեպտեմբ երի 1-7	Տնօրեն, դասղեկներ
14	Սովորողների 1-ին ընդհանուր ժողովի հրավիրում:Աշակերտական խորհրդի ձևավորման նախապատրաստում	Սովորողների 1-ին ընդհանուր ժողովը հրավիրվում է տնօրենի կողմից:Աշակերտական խորհուր դը ձևավորվում է դպրոցի 6-12-րդ դասարանների դասարանական ժողովներում փակ,գաղտնի քվեարկությամբ ընտրված մինչև 2 ներկայացուցիչներից մինչև սեպտեմբերի 20-ը:	Սեպտեմբ երի 1-8	Տնօրեն, դասղեկներ

15	Տարիֆիկացիոն և հաստիքային ցուցակների կազմում:Ամենամյա ծախսերի նախահաշվի կազմում և ներկայացում կառավարման խորհրդի քննարկմանը	Փաստաթղթերը կառավարման խորհրդի հավանությանը արժանանալուց հետո՝ ներկայացվում է լիազոր մարմնի հաստատմանը:	Սեպտեմբերի 1-15	Տնօրեն
16	Դպրոցի բյուջեի նախագծի և բյուջետային օրացույցի կազմում	Հաստատության բյուջեի նախագիծը կազմում է տնօրենը և ներկայացնում խորհրդի քննարկմանը՝ հաստատության օրինակելի կանոնադրության համապատասխան:	Սեպտեմբերի 1-15	Տնօրեն
16	Գիտելիքի օր	Միջոցառումներ՝նվիրված Գիտելիքի օրվան	Սեպտեմբերի 1	Տնօրենի ու/դ տեղակալ,դասղեկներ
17	Առաջին կիսամյակի դասացուցակի և դասաբաշխման,առարկայական թեմատիկ պլանների,սովորողների անձնական գործերի լրացում ԴԿՏ/emis.am/էլեկտրոնային համակարգում	1-ին կիսամյակի դասացուցակի,առարկայական թեմատիկ պլանների, դասղեկական պլանների հաստատումից հետո բ նշվածները և սովորողների անձնական գործերում ընդգրկված տվյալները լրացվում են ԴԿՏ/emis.am/ էլեկտրոնային համակարգում:Կատարվում է նաև Ուսուցիչների վերաբերյալ տվյալների փոփոխություն՝ առկայության դեպքում:	Սեպտեմբերի 6-10	Տնօրեն, դպրոցի օպերատոր
18	Ներդպրոցական վերահսկողություն	ա/ընթերցանության գնահատումը 2-4-րդ դասարաններում, բ/նախնական մնացորդային գիտելիքների ստուգում մաթեմատիկայից միջին դասարաններում, գ/նախնական մնացորդային գիտելիքների ստուգում հայոց լեզվից և գրականությունից ավագ դասարաններում: ՆԴԿ-ն իրականացնել ամենշաբաթյա գրաֆիկով	Սեպտեմբերի 12-30	Տնօրեն,տնօրենի ու/դ տեղակալ,մ/մ նախագահներ
19	Անկախության օրվան նվիրված միջոցառումներ	ՀՀ Անկախության 22-րդ տարեդարձին նվիրված ցերեկույթներ,ռազմա-հայրենասիրական	Սեպտեմբերի 19-21	Տնօրենություն

		միջոցառումներ կազմակերպել, հայտարարել շարադրություն ների մրցույթ:		
20	Երկարօրյա խմբերի ձևավորում	Երկարօրյա խմբերը ձևավորվում են մայրենի, մաթեմատիկա, գերմաներեն առարկաներից 1-3 միավոր գնահատված աշակերտներից ծնողի համաձայնությամբ	Սեպտեմբերի վերջ	Տնօրենություն, դասավանդող ուսուցիչներ,երկարօրյա խմբերը վարող ուսուցիչներ
21	Առարկայական մեթոդմիավորումների նիստեր	Մեթոդմիավորումները քննարկում են ուսումնական նախագծերի թեմատիկայի ընտրության, դրանց իրականացման հետ կապված և ուսումնադաստիարակչական գործընթացի բարելավմանն ուղղված այլ հարցեր:	Սեպտեմբերի վերջ	Տնօրեն,տնօրենի ու/դ տեղակալ,մ/մ նախագահներ
22	Դպրոցի բյուջեի նախագծի քննարկումների կազմակերպում և լրամշակում	Բյուջեի նախագծի քննարկումներ մանկավարժական,ծնողական և աշակերտական, կառավարման խորհուրդների հետ:Ստացած դիտողությունների և առաջարկությունների հիման վրա նախագծի վերջնական տարբերակի մշակում:	Հոկտեմբերի 3-10	Տնօրեն
23	Ուսուցչի և թարգմանչաց տոներին նվիրված միջոցառումներ		Հոկտեմբերի 5-12	Տնօրենություն հայրենագիտական մ/մ
24	Անդրադարձ -ուսումնական առարկաների որակի ուսումնասիրությանը /հայոց և համաշխարհային պատմություն,հայոց լեզու:մայրենի/ -առարկայական օլիմպիադաների նախապատրաստությանը Էլմատյաններում կատարվող գրանցումներին	Տնօրենի,ու/դ գծով նրա տեղակալի,մ/մ նախագահների մասնակցությամբ խորհրդակցությանը քննարկել նշված առարկաների դասավանդման որակի ուսումնասիրության արդյունքները, հաջողություններն ու դժվարությունները, Էլմատյանում գրանցումների հարցը,նշել բացթողումները, տալ հանձնարարություններ դրանք որոշակի ժամկետում շտկելու ուղղությամբ:	Հոկտեմբերի 11-12	Տնօրեն,տնօրենի ու/դ տեղակալ,մ/մ նախագահներ
25	Ճանաչողական արշավներ և	ՀՀ ԿԳՄՍ	Հոկտեմբե	Տնօրեն,դասղե

	այցելություններ ՀՀ պատմամշակութային ու մարտական փառքի վայրեր,զոհվածների հիշատակը հավերժացնող կոթողներ,թանգարաններ	նախարարությանկողմից հատկացրած բաժանորդային տոմսերի օգտագործում:	րի 24-30	կներ
26	Մանկխորհրդի նիստ -ուսուցիչների ուսումնական առաջադիմության նախնական ամփոփում, -ԿԱՊԿ ունեցող սովորողների ԱՈՒՊ-ների քննարկում, -սոցիալապես անապահով ընտանիքների և ծնողազուրկ սովորողների դասագրքերի առանց ներդրման պետության կողմից տրվող վարձավճար ների հատկացում Ծնողական ժողովներ	Սովորողների ուսումնական առաջադիմության նախնական ամփոփում է կատարվում գրավոր և բանավոր ստուգման տարբեր տեսակների կիրառմամբ և այն ներկայացվում ծնողներին:	Հոկտեմբերի 20-22	Տնօրեն,մանկ խորհուրդ
27	Մասնակցություն «Մեղու» համահայկական մրցույթին	Ապահովել սովորողների ակտիվ մասնակցություն	Հոկտեմբեր	Տնօրենի ու/դ տեղակալ
28	Ծնողխորհրդի նիստ	Արտադպրոցական և արտադասարանական աշխատանքների վերլուծություն	Հոկտեմբերի 17-20	Տնօրենի տեղակալ,դասղեկներ
29	Աշխորհրդի նիստ	Սովորողի ստեղծագործական աշխատանքների խթանման հարցեր	Հոկտեմբերի 17-21	
30	Ներդպրոցական վերահսկողություն	ա/2-4-րդ դասարանների սովորողների գիտելիքների գրավոր ստուգում մայրենի առարկայից, բ/նախ. մնացորդային գիտելիքների ստուգում 7-9-րդ դասարաններում հայոց լեզվից,գ/նախ.մնացորդային գիտելիքների ստուգում 10-11-րդ դասարաններում բնագիտական առարկաներից դ/էլմատյանների ստուգում: ՆԴԿ-նիրականացնել /ամենշաբաթյա ռեժիմով/	Հոկտեմբերի3-24	Տնօրեն,տնօրենի ու/դ աշխ. գծով տեղակալ

31	Տնօրենի հրամանը առարկայական օլիմպիադաների հանձնաժողովների կազմի հաստատման մասին	Առարկայական օլիմպիադաների դպրոցական փուլը կազմակերպելու և անցկացնելու համար ստեղծվում են առարկայական օլիմպիադաների հանձնաժողովներ	Նոյեմբերի 10-12	Տնօրեն
32	Մեթոդմիավորումների կողմից հարցաշարերի կազմում և հաստատում տնօրենի կողմից	Մ/մ-ների կողմից հումանիտար առարկաների և ՆԶՊ-ի առարկայական օլիմպիադաների դպրոցական փուլի հարցաշարերը կազմվում և ներկայացվում են տնօրենի հաստատմանը,ԲՏՀՄ առարկայական օլիմպիադաները անց են կացվում առցանց:	Նոյեմբերի 15-19	Տնօրեն,տնօրենի ու/դ տեղակալ,մ/մ նախագահներ
33	Ֆիզիկա և գերմաներեն ուսումնական առարկաների դասավանդման որակի ուսումնասիրություն	Կատարել դասալսումներ,տալ թեստային աշխատանքներ, կատարել վերլուծություն:9-րդ և 12-րդ դասարանների արդյունքների վերլուծությունը կատարել տնօրենի մասնակցությամբ:	Նոյեմբերի 7-26	Տնօրեն,տնօրենի ու/դ աշխ.գծով տեղակալ,մ/մ նախագահներ
34	Առարկայական օլիմպիադաների դպրոցական փուլի անցկացում,արդյունքների ամփոփում	Առարկայական օլիմպիադաների դպրոցական փուլի արդյունքները հումանիտար առարկաներից և ՆԶՊ-ից ամփոփվում և տարածքային փուլին մասնակցող սովորողների ցուցակները մ/մ-ների երաշխավորությամբ հաստատվում են տնօրենի կողմից:	Նոյեմբերի վերջ-դեկտեմբերի սկիզբ	Տնօրեն,տնօրենի ու/դ աշխ. գծով տեղակալ, մ/մ նախագահներ
35	Ներդպրոցական վերահսկողություն	ա/2-4-րդ դասարանների սովորողների գիտելիքների գրավոր ստուգում մաթեմատիկա առարկայից, բ/նախ. Մնացորդային գիտելիքների ստուգում 7-9-րդ դասարաններում բնագիտական առարկաներից,գ/նախ.մնացորդային գիտելիքների ստուգում 10-11-րդ դասարաններում հանրահաշիվ,երկրաչափություն առարկաներից,դ/մատենավարության ստուգում,ե/արտադասարանական աշխատանքների ստուգում, ՆԴԿ-ն իրականացնել	Նոյեմբերի 1-30	Տնօրեն,տնօրենի ու/դ տեղակալ,մ/մ նախագահներ

		ամենշաբաթյա ռեժիմով		
36	Աշվորդների ուսումնական առաջադիմության նախնական ամփոփում: Ծնողական ժողովներ	Սովորողների ուսումնական առաջադիմության նախնական ամփոփում է կատարվում գրավոր և բանավոր ստուգման տարբեր տեսակների կիրառմամբ և այն ներկայացվում ծնողներին:	Դեկտեմբերի սկիզբ	Տնօրեն,դասղեկներ
37	Դեկտեմբերին կազմակերպվող պետական ավարտական քննություններին մասնակցելու համար սովորողի գրավոր դիմումը դպրոցի տնօրենին	12-րդ դասարանի սովորողը դեկտեմբերին կարող է պետական ավարտական քննություններ հանձնել այն առարկաներից, որոնք չի ուսումնասիրելու 2-րդ կիսամյակում:	Մինչև դեկտեմբերի 1-ը	Տնօրեն,12-րդ դասղեկ
38	Պետական ավարտական քննություններ հանձնողների դիմում-հայտերի փոխանցումը ԳԹԿ	Քննություն տվողների դիմում-հայտերը էլեկտրոնային եղանակով փոխանցել ԳԹԿ;	Դեկտեմբերի 1-8	Տնօրեն,օպերատոր
39	Մաթեմատիկա,հանրահաշիվ. երկրաչափություն ուսումնական առարկաների դասավանդման որակի ուսումնասիրություն	Կատարել դասալսուներ,տալ թեստային աշխատանքներ, կատարել վերլուծություն:9-րդ և 12-րդ դասարանների արդյունքների վերլուծությունը կատարել տնօրենի մասնակցությամբ:	Դեկտեմբերի 1-17	Տնօրեն,տնօրենի ու/դ աշխ.գծով տեղակալ,մ/մ նախագահներ
40	Մանկավարժական խորհրդի նիստ	Նիստի օրակարգում -1-ին կիսամյակում սովորողների ուսումնական առաջադիմության ամփոփում -առաջիկա տարվա բյուջեի նախագծի քննարկում -տնօրենի հաշվետվություն -տնօրենի ու/դ աշխ.գծով տեղակալի,մ/մ նախագահների, դասղեկների,ուսուցչի օգնականների,խմբակավարների և երկարօրյա խմբերը վարող ուսուցիչների հաշվետվություններ: -էլմատյանների լրացման հարցի քննարկում -երկարօրյա խմբերի աշխատանքների արդյունավետությունը	Դեկտեմբերի 26-27	Տնօրեն,մանկխորհուրդ

41	Հաստատության կառավարման խորհրդի հավանությանը ներկայացնել առաջիկա տարվա բյուջեի նախագծը,ուսումնադաստիարակչական գործընթացի վերաբերյալ հաշվետվություն: Հաստատել երկրորդ կիսամյակի դասացուցակը	Տնօրենը առաջիկա տարվա բյուջեի նախագիծը, ուսումնադաստիարակչական գործընթացի վերաբերյալ հաշվետվությունը ներկայացնում է խորհրդի քննարկմանը, հաստատում է երկրորդ կիսամյակի դասացուցակը:	Դեկտեմբերի 26-27	Տնօրեն

2-րդ կիսամյակ

1	2-րդ կիսամյակի ուսումական գործընթացի նախապատրաստում	Կատարվում է դասաբշխում, հաստատվում է 2-րդ կիսամյակի ուսպլանը և դասացուցակը,12-րդ դասարանում ձևավորվում են առարկայական խմբեր:	Հունվարի 3-5	Տնօրեն,տնօրենի ու/դ գծով աշխ.գծով տեղակալ
2	Մանկավարժական խորհրդի նիստ	Օրակարգում՝ քննարկել պետական ավարտական քննություններ հանձնած 12-րդ դասարանի սովորողների արդյունքները և կայացնել որոշում:Մեդալի հավակնորդ սովորողի փաստաթղթերը փոխանցել լիազորված մարմին:	Հունվար 9-14	Տնօրեն,ուսուցիչներ
3	Հաստատության խորհրդի նիստ	Դպրոցի խորհուրդը քննարկում և հավանություն է տալիս առաջին կիսամյակի ֆինանսական հաշվետվությունը.ի գիտություն է ընդունում ուսումնադաստիարակչական գործունեության հաշվետվությունը, տնօրենի ներկայացմամբ	Հունվարի 16-18	Տնօրեն

		խորհուրդը քննարկում ,հավանություն տալու դեպքում պետական լիազոր մարմնի հաստատմանն է ներկայացնում դպրոցի ամենամյա ծախսերի նախահաշիվը, քննարկում է դպրոցի զարգացման ծրագրի կատարման ընթացքը:		
4	Հայոց բանակի օրվան նվիրված միջոցառումներ	Կազմակերպվում են հետևյալ միջոցառումները՝ ցերեկույթ, -ջահերով արշավ դեպի գյուղի մոտի բարձրադիր սարը -այցելություն Եռաբլուր -շարադրությունների համադպրոցական մրցույթ «Նամակ զինվոր եղբորս»վերնագրով:	Հունվարի 24-28	Տնօրեն,տնօրենի տեղակալ, ՆՁՊ-ի, պատմության, մայրենիի ուսուցիչներ
5	Ներդպրոցական վերահսկողություն	ա/մատենավարության ստուգում,բ/դասղեկի ժամերի և ուսումնական խմբակների պարապմունքների կազմակերպման ստուգում,գ/2-4-րդ դասարանների սովորողների գիտելիքների գրավոր ստուգում ես և շրջակա աշխարհը առարկայից, դ/նախ. մնացորդային գիտելիքների ստուգում 7-9-րդ դասարան ներում բնագիտական առարկաներից, ե/նախ.մնացորդային գիտելիքների ստուգում 10-11-րդ դասարաններում հայոց պատմություն և համաշխարհային պատմություն առարկաներից: ՆԴՎ-ն իրականացնել ամենշաբաթյա ռեժիմով	Հունվարի 10-31	Տնօրեն,տնօրենի ու/դ աշխ. գծով տեղակալ
6	Աշխարհագրություն և ՆՁՊ առարկաների դասավանդման որակի ուսումնասիրություն	Կատարել դասալսուներ,տալ թեստային աշխատանքներ, կատարել վերլուծություն:	Հունվարի 10-30	Տնօրեն,տնօրենի ու/դ աշխ.գծով տեղակալ
7	ԿԱՊԿ ունեցող սովորողների	ԱՈՒՊ-ների լրացում	Հունվարի	Տնօրեն,մանկ

	ԱՈՒՊ-ների լրացում և քննարկում	իրականացվում՝ դասավանդող ուսուցիչների և մանկավարժի օգնականների կողմից:	24-31	ավարժի օգնականներ, ուսուցիչներ
8	Մանկավարժական խորհրդի նիստ	Օրակարգում՝ դպրոցականների առարկայական օլիմպիադաների տարածքային փուլի ամփոփում և մարզայի փուլի նախապատրաստություն	Փետրվարի 1-3	Տնօրենություն
9	Ուսումնական առարկաների դասավանդման որակի ուսումնասիրություն/քիմիա, կենսաբանություն/	Հատկապես ուշադրություն պետք է դարձնել լաբորատոր աշխատանքների կատարմանը	Փետրվարի 1-28	Տնօրեն,տնօրենի ու/դ աշխ. գծով տեղակալ,մ/մ նախագահներ
10	Ներդպրոցական վերահսկողության իրականացում	ա/մատենավարության ստուգում,բ/արտադպրոցական արտադասարանական աշխատանքների վերահսկողություն,գ/2-4-րդ դասարանների սովորողների գիտելիքների ստուգում շախմատ առարկայից, դ/նախ. մնացորդային գիտելիքների ստուգում 5-6-րդ դասարաններում մայրենի առարկայից,ե/նախ.մնացորդային գիտելիքների ստուգում 10-11-րդ դասարաններում ռուսաց լեզու առարկայից: ՆԴՎ-ն իրականացնել ամենշաբաթյա ռեժիմով	Փետրվարի 1-28	Տնօրեն,տնօրենի ու/դ աշխ.գծով տեղակալ
11	Միջոցառումներ՝ նվիրված	ա/ Թումանյանի 154-ամյակին բ/Գիրք նվիրելու օրվան գ/Պոեզիայի օրվան դ/Մայրենիի տոնին ե/Սրբոց Վարդանանց տոնին	Փետրվարի 10-21	Տնօրենի ու/դ աշխ. գծով տեղակալ,Հայոց լեցվի,գրականության և հայրենագիտության մ/մ
12	ԿԱՊԿ ունեցող սովորողների ԱՈՒՊ-ների լրացում և քննարկում	ԱՈՒՊ-ների լրացում իրականացվում՝ դասավանդող ուսուցիչների և	Փետրվարի 24-28	Տնօրեն,մանկավարժի օգնականներ,

		մանկավարժի օգնականների կողմից:		ուսուցիչներ
13	Մ/մ նախագահների մասնակցությամբ խորհրդակցություն	Քննարկվում է փորձարկվող դասարաններում ՀՊՉ-ի առարկայական չափորոշիչների և ծրագրերի իրականացմանն ուղղված հարցերի քննարկում:	Փետրվարի 27-28	Տնօրեն,տնօրենի ու/դ աշխ. գծով տեղակալ,մ/մ նախագահներ
14	Միջոցառումներ նվիրված	ա/զարնան զարթոնքին բ/Կանանց միջազգային օրվան գ/ այցելություններ զինծառայող և զոհված շրջանավարտների մայրերին:	Մարտի 1-8	Տնօրեն,տնօրենի ու/դ աշխ. գծովտեղակալ ,դասղեկներ
15	Մասնակցություն Կենգուրու»միջազգային մաթեմատիկական մրցույթին	Ապահովել սովորողների ակտիվ մասնակցությունը մրցույթին:	Մարտ	Տնօրեն,տնօրենի ու/դ աշխ. գծով տեղակալ,մաթեմատիկայի մ/մ
16	Բյուջեի կատարման մասին տարեկան հաշվետվությունները ներկայացնելու և հրապարակելու ժամկետներ	Տնօրենը կազմում է բյուջետային օրացույց մինչև մարտի 15-ը	Մարտի 10-14	Տնօրեն
17	Ներդպրոցական վերահսկողության իրականացում	ա/մատենավարության ստուգում,բ/երկարօրյա խմբերի և խմբակների աշխատանքների վերահսկողություն,գ/2-4-րդ դասարանների սովորողների ընթերցանության կազմակերպաումը դ/նախ. մնացորդային գիտելիքների ստուգում 7-9-րդ դասարաններում հայոց պատմություն առարկայից,ե/նախ.մնացորդային գիտելիքների ստուգում 10-11-րդ դասարաններում հանրահաշիվ և երկրաչափություն առարկաներից: ՆԴՎ-ն իրականացնել ամենշաբաթյա ռեժիմով	Մարտի 1-24	Տնօրեն,տնօրենի ու/դ աշխ.գծով տեղակալ
18	Ուսումնական առարկաների դասավանդման որակի ուսումնասիրություն/ուսաց	Ուշադրություն դարձնել բանավոր խոսքին,ստեղծագործական	Մարտի 1-24	Տնօրեն,տնօրենի ու/դ աշխ. գծով

	լեզու/	մտածողությանը:		տեղակալ.մ/մ նախագահներ
19	Մ/մ նիստեր	Մեթոդմիավորումները քննարկում են կատարած աշխատանքները և հետագա անելիքները:	Մարտի 20-24	Տնօրեն,տնօրենի ու/դ աշխ. գծով տեղակալ.մ/մ նախագահներ
20	Մանկավարժական խորհրդի նիստ	Օրակարգում՝ 2-րդ կիսամյակի ուսումնադաստիարակչական գործընթացը,սովորողների ուսումնական առաջադիմությունը,էլմատյանների վարմա,ուսումնական նախագծերի իրականացման, առարկայական օլիմպիադաների հանրապետական փուլի արդյունքների և հաղթողների խրախուսման հարցերը:	Մարտի 27-30	Տնօրեն,մանկավարժական խորհուրդ
21	Սովորողների ուսումնական առաջադիմության ամփոփում:Ծնողական ժողովներ	Սովորողների ուսումնական առաջադիմության նախնական ամփոփում է կատարվում գրավոր և բանավոր ստուգման տարբեր տեսակների կիրառմամբ և այն ներկայացվում ծնողներին	Մարտի 30-31	Տնօրեն,դասղեկներ
22	Հունիս ամսին կազմակերպվող պետական ավարտական քննություններին մասնակցող 12-րդ դասարանի սովորողների ցուցակի փոխանցում ԳԹԿ	Ցուցակի փոխանցումը կատարել էլեկտրոնային եղանակով	Ապրիլի 3-28	Տնօրեն,օպերատոր
23	4-րդ դասարանում անցկացվող «Մայրենի» /գրավոր/ և «Մաթեմատիկա» /գրավոր/առարկաներից գիտելիքների ստուգումների, 9-րդ դասարանի «Գրականություն»,«Հայոց պատմություն», «Օտար լեզու»առարկաների ավարտական քննությունների տոմսերի կազմում	4–րդ դասարանում անցկացվող գիտելիքների ստուգումների առաջադրանքները կազմվում է մ/մ-ի կողմից: 9-րդ բանավոր քննությունների հարցատոմսերը կազմում են մեթոդմիավորումները ըստ ԳԹԿ-ի մշակած հարցաշարերի:	Ապրիլի 1-մայիսի 15	Տնօրեն,տնօրենի ու/դ գծով տեղակալ,մեթոդմիավորումներ
24	Հերթական ատեստավորման ենթակա և կամավոր	Նշված ուսուցիչների վերաբերյալ տվյալները	Ապրիլի 12-13	Տնօրեն,օպերատոր

	ատեստավորման հայտ ներկայացրած ուսուցիչների ցուցակների կազմում:	ներկայացնելլիազորված մարմին,:Պարտադիր ատեստավորման երթակա ուսուցիչների վերաբերյալ գրանցում է կատարվում ԿՏԱԿ-ի ԴԿՏ համակարգում:		
24	Անդրադարձ ուսումնական առարկաների դասավանդման որակի ուսումնասիրության /հայոց լեզու և մաթեմատիկա/	Ստուգման նպատակով ներդպրոցական գրավոր աշխատանքներ,վերլուծել տնօրենի մասնակցությամբ:		Տնօրեն,տնօրենի ու/դ գծով տեղակալ,մեթոդմիավորումներ

25	Մանկավարժական խորհրդի նիստ	Մանկխորհուրդը հաստատում է ա/9-րդ դասարանի սովորողների կողմից ընտրված ավարտական/«Օտար լեզու», «Բնագիտություն»/քննական առարկաների ցանկը, բ/քննարկում է ԿԱՊԿ ունեցող սովորողների ուսումնական առաջադիմության արդյունքները,	Ապրիլի 15-30	Տնօրեն,մանկավարժական խորհուրդ
26	Ներդպրոցական վերահսկողության իրականացում	ա/մատենավարության ստուգում,բ/երկարօրյա խմբերի և խմբակների աշխատանքների վերահսկողություն,գ/2-4-րդ դասարանների սովորողների գիտելիքների ստուգում մայրենի առարկայից դ/նախ. մնացորդային գիտելիքների ստուգում 7-9-րդ դասարաններում ՆԶՊ առարկայից, ե/նախ.մնացորդային գիտելիքների ստուգում 10-11-րդ դասարաններում հայոց լեզու և հայ գրականություն առարկաներից: ՆԴՎ-ն իրականացնել ամենշաբաթյա ռեժիմով	Ապրիլի 3-28	Տնօրեն,տնօրենի ու/դ աշխ. գծով տեղակալ,մ/մ նախագահներ
27	Միջոցառումներ նվիրված Հայոց մեծ եղեռնին	ա/ցերեկույթ բ/Ս.Թեհլերյանի	Ապրիլի 21-24	Տնօրեն,դասղեկներ

		դատավարությունը գ/այցելություն Ծիծեռնակաբերդի հուշահամալիր/9-12-րդ դասարաններ/:		
28	Խորհրդակցություն	Ավարտական,պետական ավարտական քննություններին նախապատրաստության գործընթացի քննարկում:	Մայիսի 2-4	Տնօրեն,տնօրենի ու/դ աշխ. գծով տեղակալ,մ/մ նախագահներ
29	Միջոցառումներ նվիրված Մայիսյան տոներին	ա/գրական-երաժշտական ցերեկույթ գյուղի հուշարձանի մոտ, բ/այցելություն գյուղի միակ վետերանին գ/այցելություններ Եռաբլուր, Հայրենական պատերազմի թանգարան, Սարդարապատի, Բաշ-Ապարանի հուշահամալիրներ	Մայիսի 8-10,26-28	Տնօրեն,դասղեկներ,պատմության ուսուցիչ
30	Անդրադարձ դպրոցի ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանով 2-րդ կիսամյակի համար նախատեսված աշխատանքների կատարմանը	Խորհրդակցություն քննարկվում է դպրոցի ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանով 2-րդ կիսամյակի համար նախատեսված աշխատանքների կատարմանընթացքը,գնահատում արդյունքները,և տալիս համապատասխան հանձնարարություններ գործընթացի բարելավման ուղղությամբ:	Մայիսի15-20	Տնօրեն,տնօրենի ու/դ աշխ. գծով տեղակալ,մ/մ նախագահներ
31	4-րդ դասարանում անցկացվող «Մայրենի» /գրավոր/ և «Մաթեմատիկա» /գրավոր/առարկաներից գիտելիքների ստուգումների, 9-րդ դասարանի «Գրականություն»,«Հայոց պատմություն», «Օտար լեզու»առարկաների ավարտական քննությունների	Առաջադրանքները և հարցատոմսերը տնօրենի հաստատմանն ենձն ներկայացնում տնօրենի ու/դ աշխատանքների գծով տեղակալը և/կամ մեթոդմիավորման նախագահները:	Մայիսի 15-17	Տնօրեն,տնօրենի ու/դ աշխ. գծով տեղակալ,մ/մ նախագահներ

	տումսերի ներկայացում տնօրենի հաստատմանը			
32	Անդրադարձ ուսումնական առարկաների որակի ուսումնասիրությանը	-Հայոց պատմություն. -Համաշխարհային պատմություն -Հասարակագիտություն	Մայիսի 16-19	Տնօրեն,տնօրենի ու/դ աշխ. գծովտեղակալ մ/մ նախագահ
33	Մանկավարժական խորհրդի նիստ՝ ուսումնական տարվա ընթացքում 120-200 ժամ դասերից բացակայած սովորողների հարցի քննարկում	120-200 բացակայած 12-րդ սովորողի դուրս մնալու հարցը քննարկվելուց հետո տնօրենի կողմից ներկայացվում է Նախարարություն և ԳԹԿ:Ուստարվա ընթացքում 2-12-րդ դասարաններում 120-200 ժամ բացակայության դեպքում բոլոր առարկաների տարեկան գնահատականները որոշվում են լրացուցիչ քննությունների և ամփոփիչ ստուգողական աշխատանքների միջոցոն,200 ժամից ավելի բացակայած աշակերտը մնում է նույն դասարանում:	Մայիսի 10-15	Տնօրեն,մանկավարժական խորհուրդ
34	Տնօրենի հրամանը՝ ավարտական,պետական ավարտական քննությունների և 4-րդ դասարանում գիտելիքների ստուգման քննական հարձնաժողովների ստեղծման	4-րդ դասարանում գիտելիքների ստուգումն անց են կացնում դասավանդող ուսուցիչը և տնօրենի կողմից նշանակված ներկայացուցիչը, 9-րդ դասարանի բանավոր քննությունների հանձնաժողովի կազմը՝նախագահ/տնօրեն/,քննող ուսուցիչ/դասավանդող/ և ընթերակա/նույն կամ հարակից առարկայի ուսուցիչ/,գրավոր քննությունների ստուգող հանձնաժթողովի 50%-ը առարկայի մասնագետն է,12-րդ դասարանի քնությունների հանձնաժողովում չի կարող լինել առարկայի մասնագետ:	Մայիսի 20-30	Տնօրենություն
35	Ուստարվա ընթացքում 120-	Ուստարվա ընթացքում 120-200	Մայիսի 20-	Տնօրեն,տնօրեն

	200 ժամ դասերից բացակայած 2-11-րդ դասարանների սովորողների լրացուցիչ քննությունների և ամփոփիչ ստուգողական աշխատանք ների անցկացում	ժամ դասերից բացակայած 2-11-րդ դասարանների սովորողների լրացուցիչ քննություններ են հանձնում մայրենի և մաթեմատիկա առարկաներից,ամփոփիչ ստուգողական աշխատանքներ ուսումնական պլանով սահմանված մյուս առարկա ներից,«Ֆիզկուլտուրա» առարկայից անցկացվում է ստուգարք:12-րդ դասարանի սովորողը 2-րդ կիսամյակում 120-200ժամ բացակայելու դեպքում քննություն է հանձնում այն առարկաներից , որոք ընտրել է:	30	նի ու/դ աշխ. գծով տեղակալ,ուսուցիչներ
36	Մանկավարժական խորհրդի նիստ	Օրակարգում՝ ա/2-11-րդ դասարանների հաջորդ դասարան փոխադրելու, ավարտական,պետական ավարտական քննություններին թույլատրելու բ/2-8-րդ,10-11-րդ,ինչպես նաև 19 տարին չլրացած 9-րդ և 12-րդ սովորողը 200 ժամից ավելիբացակայելու դեպքում կրկնում է տվյալ ուստարվա դասընթացը,9-րդ և 12-րդ դասարանների 19 տարի լրացած սովորողը դուրս է մնում հաստատությունից:	Մայիսի 30-31	Տնօրեն,մանկխորհուրդ
37	Ավարտական,պետական ավարտական քնությունների և գիտելիքների ստուգման կազմակերպում և անցկացում	Ավարտական,պետական ավարտական քնություններն անց են կացվում կրթության պետական կառավարման լիազորված մարմնի կողմից հաստատված՝ սովորողների գիտելիքների ստուգման, ավարտական,պետական ավարտական քնությունների անցկացման աշխատակարգի	Մայիսի վերջ-հունիս	Տնօրենություն

		պահանջներին համապատասխան:		
38	Ուսումնական հաստատության սովորողի ընդունելության կազմակերպում	Սովորողներիընդունելությունը Իրականացվում է տնօրենի հրամանով՝ դպրոցահասակ երեխայի ծնողի կամ օրինական ներկայացուցչի դիմումի հիման վրա:	Հունիս	Տնօրեն
39	Նախնական դասաբաշխում	Դպրոցի հաջորդ ուստարվա օրինակելի պլանի հիման վրա մեթոդմիավորումները կարող են քննարկել նախնական դասաբաշխումը և առաջարկություն ներկայացնել տնօրենին:	Հունիս	Տնօրեն,մեթոդ միավորումնե ր
40	Վերաքննությունների կազմակերպում	Կազմակերպել՝ ըստ վերաքննության կարգի	Հունիսի 20-30	Տնօրենություն
41	Մանկավարժական խորհրդի նիստ	Նիստի օրակարգում՝ -2-րդ կիսամյակում սովորողների ուսումնական առաջադիմության ամփոփում -տնօրենի տարեկան հաշվետվություն -տնօրենի ու/դ աշխ.գծով տեղակալի,մ/մ նախագահների, դասղեկների,ուսուցչի օգնականների տարեկան հաշվետվություններ:	Հունիսի 27-29	Տնօրեն,մանկ խորհուրդ